ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՀՅՈՒՐԸՆԿԱԼԵԼ Է ՌՈՒՍ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻՆ

19.05.2023 17:31

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի հրավերով Պալատում հյուրընկալվեցին Երևանում կայացած միջազգային իրավական համաժողովի մասնակից փաստաբանները:

Հյուրերի կազմում էին Լենինգրադի մարզի փաստաբանների պալատի նախագահ Դենիս Լակտիոնովը, Սանկտ Պետերբուրգի փաստաբանների պալատի նախագահի տեղակալ Ռուշան Չինոկաևը և Ռուսաստանի փաստաբանական համայնքի մի շարք ներկայացուցիչներ:

Հանդիպման սկզբում հյուրերը շրջեցին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում, հանդիպումներ ունեցան ՀՀ փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Ջոհրաբյանի և Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գևորգ Մկրտչյանի հետ:

Այնուհետև Փաստաբանների պալատի մեծ դահլիճում երկու երկրների գործընկերները քննարկեցին համատեղ գործընկերային հարաբերությունները և փաստաբանությանն առնչվող մի շարք առանցքային հարցեր:

Սիմոն Բաբայանն ու Արա Ջոհրաբյանը պատասխանեցին հյուրերի ամենատարբեր հարցերի՝ ապահովելով փորձի փոխանակում և բովանդակային զրույց, ինչպես նաև ներկայացրել են ոլորտին առնչվող առկա մարտահրավերները և հայ փաստաբանների կողմից կիրառվող մեխանիզմները՝ դրանց հաղթահարման նպատակով:

Հանդիպման ավարտին ռուս գործընկերները շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության և արդյունավետ քննարկում անցկացնելու համար:









ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ



ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ
ԳՐԱՍԵՆՅԱԿ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })